




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8920
Գրողները բոլոր յերկրներէ, միացե՛ք.

ՄԻՆԿՈՎ Մ.



ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՍ
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍ-
ՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳՐԱԳՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆՏԿՈՄԻ ՀՐԵՏ. № 8

ՅԵՐԵՎԱՆ 1927

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1390.
ԳՐԱՌ. 911 Բ., ՏԻՐԱԺ 8000.

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ՄԵՐ ՅԵՂԲԱՅՐ-ԳՅՈՒ-
ՂԱՅԻՆԵՐԸ ԱՐՅԵՎՄՈՒՏՔՈՒՄ.

Խորհրդային Սոցիալիստական Հանրայն-
ությունների Միության գյուղացիությունը
չգիտե ամենևին, թե ինչպես ե ապրում գյու-
ղացիությունը Արևմուտքում, Խորհրդային
Միության սահմաններից այն կողմը:

Բայց պե՛տք ե գիտենալ այդ: Չե՞ վոր այն
գյուղացիները, վորոնք այժմ ապրում են Լե-
հաստանում, Լիտվիայում, Լատվիայում, Ես-
տոնիայում, Ֆինլանդիայում, Բեսարաբիա-
յում, շատ առաջ չեր, վոր ապրում եյին Ռու-
սաստանում ե մեզ հետ միասին տանջվում եյին
ցարիզմի ճնշման տակ ե իրավազուրկ. իսկ
այժմ նրանք ե՛լ ավելի վատ են ապրում, քան
ցարի ժամանակ:

Յարական իրավազրկությունը, կալվածա-
տերերի ստրկացումը, ժանդարմների ե ուր-
յաղնիկների կամայականությունը շատ ավելի
հեշտ եր տանել, քան այն, ինչ կրում են այժմ
Արևմուտքի, կապիտալիստական յերկրների
գյուղացիները:

Այնտեղ այնպիսի գյուղ չկա, վոր անքա-
լիս չլինի հողագրկության, ծանր հարկերի և
կալվածատիրական ճնշումների տակ:

Տնքում, հեծում և գյուղացիական հողը,
արյունով են ջրվում արտերը, դիակներով են
պարարտեցնում դաշտերը:

Կալվածատերերը հարյուր հազարավոր
գյուղացիներ բանտերն են գցում, հազարներով
վռչնչացնում են առանց դատի ու քննության:

Ժանդարմներն ու վոստիկանները ձեր-
բակալված գյուղացիներին ծեծում են, տան-
ջում անասելի լլկանքներով, հաշմանդամ
դարձնում: Ու իրենց արտասահմանյան յեղ-
բայրների կյանքի ու տանջանքների մասին
պետք է գիտենան մեր Խորհրդային Միության
գյուղացիները:

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ ՊԱ-
ՆԱԿԱՆ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ.**

Լեհաստանում յուրաքանչյուր գյուղա-
ցուն 2 դեսիատինից ավելի հող չի գալիս, իսկ
ամեն մի կալվածատերն՝ 600 դեսիատին հող
ունի: Ու թեև այդ բոլոր կալվածատերերը 130
անգամ քիչ են, կալվածատիրական հողերը
յերկու անգամ ավելի յեն քան գյուղացիների
հողերը:

Ապա կալվածատերերը այդքան հող վո՞ր-
տեղից են ձեռք բերել: Ա՛յ, լսենք, թե սեյմի
Ժողովում ինչ է պատմում պատգամավոր
Սկրիպա—ն.

«Բրիտի գավառի կամենից—Չերովի
չրջանի Պոդգորոկո—վուլկ գյուղի գյուղացի-
ներից նամակ եմ ստացել: Գյուղացիները
գրում են, վոր զինվորական իշխանությունը,
բոլոր որենքների հակառակ, գրավել է նրանց
հողերը, նույն իսկ վնասները հատուցանելով
տերերին: Այդ հողերի վրա, վոր անցել է գյու-
ղացիներին նրանց պապերից ու նախապապե-
րից, զինվորական վարժությունների հրապա-
րակ են չինել: Վնասված գյուղացիները ինչ-
քան ել ճգնում են յետ ստանալ նրանցից խլած
հողերը, չեն կարողանում: «Դեմոկրատիկ»
իշխանությունը,—գրում են վնասված գյու-
ղացիները,—կողոպտում է մեր ունեցած վեր-
ջին սաժեն հողը և մեզ աղքատացնում»:

Ե՛լ ավելի վատ է այն գյուղացիների
գրությունը, վորոնք ապրում են լեհական
Ուկրաինիայում և լեհական Բելոռուսիայում:

Ահա ինչ է պատմում սեյմի պատգամավոր
Վոյտյուկը:

«Ուկրաինացի և Բելոռուսիացի գյուղացի—

ները տնքում են հսկայական տուրքերի ծան-
րության տակ, նրանց քայքայում են մշտական
«սայլալին տուրքերը» զանազան «իշխանու-
թյունների» համար, նրանց ծաղրում, արհա-
մարում ե ամեն մի պաշտոնյա: Ամեն մի
ուկրայնական կամ բելոռուսական գյուղում
վոստիկանները կյանքի ու մահվան տերն են:
Վա՛յ նրան, ով նրա ահեղ բարկությունը գըր-
գռեց—նրա կյանքն ել չեն խնայիլ: Ուկրայ-
նական և բելոռուսական շրջանների վոստի-
կանական պահակատեղիներում գյուղացիներ-
ին ծեծում, մահվան դուռն են հասցնում, կո-
տրտում են նրա վոսկրները նրա համար, վոր
վոստիկանն անցնելիս իսկույն ճանապարհ չի
տվել նրան, նրա համար վոր ըստ առաջին պա-
հանջի միս, ծխախոտ կամ մեղր չի մատուցել
նրան»:

Մի ուրիշ պատգամավոր պատմում ե, թե
ինքն ե տեսել, վոր ձերբակալված գյուղա-
ցիների ձեռքերից ունելիքով դուրս եյին հա-
նում յեղունգները, յեղունգների տակ գրնդա-
սեղներ եյին խրում, պոկում եյին մազերը,
ջարդում եյին կողերը, խեղում եյին աղջիկ-
ների կուրծքը:

Բայց, ա՛յ, ինչ են պատմում իրենք լեհ

գյուղացիներն ու բանվորները վորոնք փախել
են լեհաստան սպիտակ տերրորի ճնշում-
ներից:

«1925 թ. ոգոստոս ամսին լեհական դեֆեն-
զիվան (պահնորդական բաժանմունքը) սկսեց
Բելոստոցի շրջանի բանվորա-գյուղացիական
չարժման ավերումը: Ամեն որ շրջանի բոլոր
ծայրերից Բելոսկ եյին բերում տասնյակներով
ու հարյուրներով ձերբակալված բանվորներ ու
գյուղացիներ:

«Ձերբակալվածներին տանում եյին հի-
վանդանոց. այնտեղ լողանալու սենյակում
նրանց բոլորովին մերկացում եյին և մտցնում
եյին մի ուրիշ սենյակ, ուր գտնվում եյին
վոստիկանական բարձր աստիճանավորները.
(սենյակի պատուհանները ներսից վարագույ-
րով պատած եյին): Առաջին հարցն եր. «դու
կոմունիստ ես», և յեթե գյուղացին պատաս-
խանում եր, վոր կոմունիստ չե, ապա նրա
բերանը փակում եյին, գցում եյին պատի տակ,
թոկերով կապոտում եյին ձեռքերն ու վոտնե-
րը, փայտ եյին անցկացնում և այս ու այն
կողմն եյին գցում: Այնքան եյին տանջում,
վոր ուշքը գնում եր: Այն ժամանակ վրան սա-
ռը ջուր եյին ածում և նորից սկսում տանջել:

Կողորդը մեզի հետ խառնած տաք ջուր
եյին լցնում, յեղունգների տակ ասեղներ եյին
խրում, հետո ասեղները շիկացնում և խրում
եյին կրունկները, ծեծում ճիւղոտներով կը-
րունկներին, ճիւղոտներով ու բռունցքներով
խփում եյին գլուխներին, քթովը այնքան ջուր
եյին ներս ածում, վոր փորն ուռչում էր, իսկ
այդ ուռած փորի վրա նստում էր մի վոստի-
կան, հետո փետում եյին նրա գլխի մազերը,
ծխախոտով աչրում եյին չրթունքները ու այդ-
պես վիրավոր, կիսամեռ գցում եյին հիվան-
դանոց:

Այսպես են դատ անում պաները բելոռուս
և ուկրայնացի գյուղացիներին: ԽՍՀՄ-ի գյու-
ղացիներ, մի՛ մոռանաք նրանց ծանր վի-
ճակի մասին»:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ ՌՈՒ- ՄԻՆԻԱՅՈՒՄ.

Ռումինիայում ել, Լեհաստանի նման հողը
մեծ մասամբ գտնվում է կալվածատերերի—
ռումինական բոյարների ձեռքին:

Գյուղացիներից այնպիսի ծանր հարկեր
են պահանջում այնտեղ, վոր գյուղացիները
գցում են իրենց հողերը և գնում ծառայության
են մտնում բոյարի մոտ: Ինքնանկախ գյուղա-

ցիական տնտեսություն է համարվում այն
տնտեսությունը, վորը մի դեսիատինից պա-
կաս հողամաս ունի:

Ռումինիայում - գյուղատնտեսական բան-
վորն ամբողջ տարին 35 ռ. է վաստակում,
միջակ գյուղացին՝ 120 ռ.—իսկ ռումինացի
բոյարը տարեկան 150 հազար ռ. արդյունք և
ստանում: Ուրեմն հասկանալի չէ, վոր Ռու-
մինիայում չարունակ գյուղացիական ապրս-
տամբություններ է լինում, իսկ ռումինական
կառավարությունը գյուղացիներին լեհացինե-
րից ավելի վատ է դատում:

Միայն խոր Դունայը և անհայտ գերեզ-
մանները կարող են պատմել, թե քանի հազար
գյուղացիներ են ընկել Ռումինիայում—ռումի-
նական բոյարների դեմ մղած պայքարում:
Այնտեղ, սպաները հենց այսպես ել գեկու-
ցում են իրենց կառավարությանը: «Խատինուկ
գավառի գյուղացիների բոլշևիկյան ապրս-
տամբությունը ճնշած է, 7 գյուղ հողի չէ հա-
վասարեցրած: Սպանված է 5 հազար մարդ»:

Բայց ե՛լ ավելի սոսկալի չէր ապստամբ
թաթարբունարական գյուղացիների դատը:
Ռումինական բոյարները վոչ վոքի չխնայեցին:
Ինչպես պատերազմի ժամանակ, թնդանոթե-

րով յերկրի յերեսից տասնյակներով գյուղեր ջնջվեցին և ամեն հնգից կամ տասից մեկին գնդակահարեցին: Արյունակղակ պաշտոնյաները չէյին խնայում վոչ ծերերին, վոչ կանանց, վոչ յերեխաներին: Սպանվածները շաբաթներով թափված, ընկած էյին մնում—և շների կերակուր դառնում:

Բայց բոյարների պաշտոնյաները դրանով չբավականացան. նրանք զինվորական դատի տվին թաթարբունարցի հինգ հարյուր գյուղացիների ու գեղջկուհիների: Միայն ամբողջ աշխարհի աշխատավորների Մոսկրի միջոցով առաջադրած հանդիմանական կապը պատճառ յեղավ, վոր պատրաստվող գազանական դատը կանդ առավ և թույլ դատավճիռ կայացրին նրանց վերաբերամբ:

Դեռ այժմ ել բոցավառվում են գյուղերը, անհնադանդները կոտորվում են, մնացածները փախչում են անտառները, փրկություն են գտնում Խորհրդային Ռուսաստանում:

Որ չի անցնում, վոր պահնորդական բաժինը նոր դատեր չսկսի, վոր տասնյակ ու հարյուրավոր գյուղացիներ, վոր կռվում են իրենց ազատության համար, բանտերն ու աղի հանքերը չընկնեն:

Ռումինիայում այսոր ել նույնն ե ինչ վոր ցարի ժամանակ եր, ինչ վոր սպիտակների ժամանակն եր:

Արյունը հոսում ե, բանտերը լիքն են: Դունայը թագցնում ե բոյարների վայրագությունների զոհերին. Ռումինացի գյուղացին, բանվորի հետ միասին, ամեն տանջանք հանձն առնելով մահվան կռվի յե գնում: Կամ ազատ ապրել կամ կռվել մեռնել—Ռումինիայում նրանց համար ուրիշ յեւք չկա:

ԳՅՈՒՂԱՅՈՒ ԿՅԱՆՔԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՒՐԻՇ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ.

Ավելի լավ չեն ապրում Լիտվայի, Եստոնիայի և Ֆինլանդիայի գյուղացիները: Այնտեղ բարոններն ու կալվածատերերը և իշխանությունն են հափշտակել և հողը ու գյուղացիներին դարձրել են ճորտ և անկամ ստրուկներ: Ու այդ յերկրների գյուղացիությունը համառ կռիվ ե մղում իր ազատության համար: 1918-ից մինչև 1925 թիվը, այնտեղ սպանվել են 25,000 մարդ, իսկ բանտերում այնտեղ 15,000-ից ավելի մարդ նստած ե բանվորա-գյուղացիական գործի համար:

Բուլղարիայում Ֆանկովի և նրա հաջորդների կառավարությունը ավերում ե գյուղերը, կո-

տորում ե մարդկանց, բանտն ե դցում ծերունի-
ներին, կանանց ու յերեխաներին: Կանանց կա-
մերաներում (բանտի սենյակ) նստած են պա-
տանի աշակերտուհիներ, վորոնց մեղադրում են
թուղցիկներ տարածելում, նստած են մայրեր
իրենց մանկահասակ յերեխաների հետ: Մեկ
յերիտասարդ կին բանտ ե նստեցրած նրա հա-
մար, վոր նրա իբր թե կոմունիստ ամուսինը
անձնասպանություն ե գործել այն ժամանակ,
յերբ նրան ուղղում էին ձերբակալել: Մի ուրիշը
15 տ. տաժանակիր աշխատանքի յե դատա-
պարտված նրա համար, վոր իր հեղափոխական
վորդուն ապաստան ե տվել:

Սոֆիայի տաճարի պալթունից հետո Բուլ-
ղարիայում 25,000 մարդ ե սպանված. ձերբա-
կալված էին 10,000 հոգուց ավելի ու մինչե
այսօր 8,000 տղամարդուց, կանանցից ու յերե-
խաներից ավելի տանջվում են բանտերում:

Հնդկաստանում, ուր գյուղացիությունը
շատ ավելի յե քան մյուս աղգաբնակությունը,
ուր անպատիժ չի կարելի սպանել նույն իսկ
անտեր, թափառական շանը, այնտեղ հարյուր-
ներով աղատորեն գնդակահարում են անգլիա-
կան կապիտալի ստրուկներին, — հնդկացի գյու-
ղացիներին: Բայց այդ բոլոր գնդակահարու-

թյուններն ու կախաղանները, այդ բոլոր հալա-
ծանքները չեն կարող սպանել գյուղացիության
հեղափոխական վոգին:

Լեհաստանից մինչ յետամնաց Չինաստանը
ծվում ե գյուղացիական ապստամբություն-
ների ալիքը: Ամբողջ աշխարհի գյուղացիու-
թյունը ծառանում ե տիրող ճնշման ու բռնու-
թյան դեմ:

Բոլոր յերկրների գյուղացիներն ել ուս-
ուսի յեն տալիս բանվորության հետ՝ պայքարե-
լու ճնշողների դեմ: Նրանց հայացքները, նրանց
ոգնության ճիգերը առաջին հերթին ուղղված
են խորհրդային Միության գյուղացիությանը:
ԽՍՀՄ-ի գյուղացիներ, արդյոք լսո՞ւմ եք
գուք մտրակների, գնդակների տարափի տակից
ու կախաղաններից ձե՛զ ու ամբողջ աշխարհի
գյուղացիությանն ուղղված ձեր յեղբայրնե-
րի կոչը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան գլուղացիներ, մի՛ մոռանաք Արեւմուտքի ձեր յեղբայր-գլուղացիներին, վորոնց ճնշում է կապիտալը:

Համամիութենական կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ ԽՍՀՄ-ի գլուղացութիւնը դէն շարտեց ցարիզմի շղթաները:

Մի՞թէ այժմ նա կարող է անտարբեր մնալ այն ծանր վիճակին, վորին դատապարտված են արեւմուտքի նրա յեղբայրները:

ԽՍՀՄ-ի գլուղացիութիւնը կարող է լուել, յերբ հրդեհում են գլուղերը և կոտորում անպաշտպաններին, յերբ նրանց յեղբայրները—արեւմուտքի գլուղացիները տնքում են կալվածատերերի ու կապիտալիստների լծի տակ:

Վո՛չ, չի՛ կարող: Նա պետք է ոգնի նրանց, աղատվելու դարավոր ճնշումից, նա պետք է թեթեւացնի նրանց ծանր կյանքը, նա պետք է ոգնի նրանց ու արձագանք տա նրանց ոգնութեան կոչին:

Ինչպէս պետք է անել:

ԽՍՀՄ-ում կա Հեղափոխութեան Մարտիկներին ոգնող միջազգային կազմակերպութիւն (ՄՈՊՐ-ը): Բանվորներն ու գլուղացիները հիմ-

նել են այդ կազմակերպութիւնը—պայքարելու օպիտակ տերրորի դեմ, ոգնելու հեղափոխութեան մարտիկներին: Նա ոգնութիւն է ցույց տալիս բանտարկված մարտիկներին ու նրանց ընտանիքներին: Ու դո՛ւ պետք է այդ կազմակերպութեան շարքերում համապատասխան տեղ բռնես և ակտիվ անդամ լինես:

Ամբողջ աշխարհի կալվածատերերն ու կապիտալիստները միանում են բանվորներին ու գլուղացիներին ստրկացնելու համար:

Ամբողջ աշխարհի բանվորներն ու գլուղացիները միանում են՝ վոչնչացնելու կալվածատերերին ու կապիտալիստներին:

ԽՍՀՄ-ի գլուղացիներ, հիշեցե՛ք ձեր յեղբայր-գլուղացիների պայքարը կապիտալիստական աշխարհում: Հիշեցե՛ք բանտարկված մարտիկներին, նրանց ընտանիքներին, բանվորի ու գլուղացու գործի համար գնդակահարվածների, կալվածների ու խեղդվածների ընտանիքներին:

Հիշեցե՛ք, վոր ձեր տղակցութիւնը, ձեր ոգնութիւնը անհրաժեշտ է նրանց:

Ուրեմն մտեք ՄՈՊՐ-ի դրոշի տակ, մտեք նրա շարքերը, ոգնեցե՛ք կապիտալի դերիններին նրանց ծանր պայքարում:

Ձեր ամեն մի կոպեկը թեթևացնում է
բուրժուազիայի բանտերում տառապող, — կա-
պիտալի գերի, ձեր յեղբայր—գյուղացիների
գրությունը:

Նրանց պաշտպանելու համար ձեր ամեն
մի յեւույթ կայծակի արագությամբ հասնում
է նրանց ականջին, և յեռանդ ու կարողություն
է ներշնչում նրանց՝ վերջնական կովի համար:

Խորհրդային Միության գյուղացիներ,
հիշեցեք կապիտալի աշխարհում թագավորող
սպիտակ տերրորի մասին: Հիշեցե՛ք, վոր
Արեւմուտքի գյուղացիները—ձե՛զ նման գյուղա-
ցիները, փխտում են բանտերում, տաժանակիր
աշխատանքներում ու հանքերում: Նրանք ու-
նության են սպասում:

Դե՛, ուրեմն ոգնեցե՛ք նրանց՝ ազատվելու
կալվածատերերից ու կապիտալիստներից,
ինչպես դո՛ւք ազատվեցի՛ք:

Ող—նե—ցե՛ք:

A 8643



գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0045849

[064.]

A^I₈₆₄₃

ጥቅምት 5 ዓ.ም.